8 ՆՈՅԵՄԲԵՐ 2008 ԷՋ Ա

ԱԶԳ

ՀԱՎԵԼՎԱԾ

ՄՇԱԿՈՒՅԹ

Պարբերականությունը՝ երկշաբաթյա

Թիվ 21(64)

# ՍՐԲԱԽՈՍՈՒԹՅՈ՞ՒՆ, ԹԵ՞ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԵՆՐԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ



*Ջուլիանո Զասսո. «Արշավիր Կամսարականը եւ Մուշեղ Դիմաքսյանը Ավարայրի ճակատամարտում», 19-րդ դ.*
Մխիթարյան միաբանության հավաքածու, Վենետիկ

> «Քրիստոնեությունը պատմագիրների կրոնն է»:
>
> *Մարկ Բլոկ*

Այս վեճը նոր չէ եւ ավարտված էլ չէ, քանի դեռ արդիականությունն սպասելիք ունի անցյալից, քանի դեռ պատմաբանն էլ այդ հայացքին է ենթակա: Սա թերեւս բացատրելի է: Սպասելիքն անցյալից քրիստոնեական աշխարհայացքին է հատուկ. այդպես է ավանդված Արեւմուտքի պատմությունը, նաեւ մերը, եւ դրա ժամանակագրական առանցքն ու ելակետը ծնունդն է Աստծո որդու[1]: Հեգելի հայտնի միտքը, թե պատմության ընթացքի ըմբռնումը կողմնորոշված է առ Քրիստոս, վերաբերում է գուցե ամենից ավելի մեզ: Փրկության խորհուրդը (ոչ միայն հոգեւոր) անցել է սերնդից սերունդ, հասել գիտական պատմությանն ու ամրակայվել տարբեր փոխաձեւումներով, որոնցից ամենաաշխարհիկը դասակարգային պայքարն էր եւ ամենաունիվերսալը, մինչեւ որպես թե ընդունելին՝ ազգային ազատագրական պայքարը:

Որն է իսկապես մեր պատմության խորհուրդը, կա՞ այդպիսի խորհուրդ, թե՞ տրված է մի ձեւ ի հրավեր տարբեր մեկնությունների, նայած հանգամանքների ու ժամանակի...

Եվ ահա ժամանակն է՝ անցումային պահ, երբ պատմությունն ու արդիականությունը մերձենում են՝ ստիպում քննելու մեր ազգային խնդիրը, մտածելու, թե երեկ ինչ հարց էինք տալիս եւ այսօր ինչ հարց ենք տալու անցյալին: Այդպես էլ հետ ենք նայում սպասման սովորույթով, փնտրում այն դատարկ տարածությունը, որին ասում ենք Ավարայր: Սա մեր ազգային բնազդն է, թե՞ գաղափարաբանությունը, պատմությամբ ավանդված, թե՞ սրբախոսությամբ Եղիշե վարդապետի:

Հարցի նման ձեւակերպումը թերեւս հաճելի չէ, բայց հարցն առկա է արդեն հարյուր տարուց ավելի՝ սկսած Գարագաշյանի «Քննական պատմությունից» (1895 թ.), Նիկողայոս Ադոնցի հայտնի զեկուցումից (1904 թ.) եւ այսպես՝ մինչեւ մեր օրերը[2]:

Մեր սեղանին այժմ Համլետ Դավթյանի «Մեզ անծանոթ Վարդանանց պատերազմը» աշխատության երկրորդ, լրացված հրատարակությունն է՝ հարցի մի նոր քննություն, ամենածավալունն ու ընդարձակը, բնույթով ավելի հրապարակախոսական, քան գիտական, որոշակի միտումով ու պաթոսով, եւ այնուամենայնիվ՝ գիտականորեն օգտակար: Կարելի է համաձայնել կամ չհամաձայնել հեղինակի որոշ եզրակացությունների հետ, նայած ինչն է մեզ համար կարեւոր, պատմությո՞ւնը, թե՞ սրբախոսությունն ու առասպելը: Գիտենք, որ պատմական իրադարձություններն ու դեմքերը իրենց ժամանակին իսկ եւ ժամանակակիցների գրչի տակ փոխակերպվում են ու գունավորվում ըստ նրանց կրոնա-քաղաքական կողմնորոշման, կուսակցական համակրանքի ու հակակրանքի, նաեւ ըստ շարադրանքի ժանրի, միթոլոգիական պայմանաձեւերի եւ այլն: Այդպես էլ հայտնի է պատմաբաններին, որ Վարդանանց պատերազմը վկայող երկու հեղինակները՝ Եղիշեն եւ Ղազար Փարպեցին Մամիկոնյանների գաղափարախոսներն են եւ Տղմուտ գետի այս ափից են տեսնում ու քննում սրբազան պատերազմը: Սյունյաց գաղափարախոսը չկա, նրանց կողմից խոսում են գիտնական պատմաբանները, գալով Գարագաշյանից եւ սյունեցի Ադոնցից: Այս կողմում է նաեւ ներկա աշխատության հեղինակը: Նա անչափ ուշադիր է սկզբնաղբյուրների տողի ու տառի հանդեպ եւ մեզ ստիպում է նորից թերթել սկզբնաղբյուրներն առանց նախապաշարումների, մի պահ մոռանալով անգամ հարցի պատմությունը: Սա, կարելի է ասել, յուրահատուկ էկզիստենցիալ մոտեցում է: Հեղինակն այդ վիճակում է եւ մեզ էլ ներքաշում է այդտեղ: Ուզում ենք դատել ոչ թե մեր, այլ իր իսկ առաջադրած խնդիրների տեսակետից եւ չվիճել (դա թերեւս հնացած եղանակ է), այլ ինչ-որ բան գուցե լրացնել հարցի մեզ հետաքրքրող կողմից:

Գրքի առաջին տողից մինչեւ վերջինը տրոփում է անհանգստության մի երակ, գիտականությանը խորթ, այրվում է մի հարց՝ ինչո՞ւ եւ ինչպե՞ս ենք կորցրել մեր պետականությունը վերականգնելու հնարավորությունը եւ ինչ ենք մտածում այսօր: Սա ծանր հարց է: Հեղինակի եզրակացությունը, որ չի թաքցվում սկզբից իսկ, կարող է մեզ չհամոզել, բայց չի կարող մտածել չտալ: Այս է կարեւորը, ուստի հարցը մեզ ստիպում է ուշադրությամբ հետեւել հեղինակի փաստարկումներին ու տրամաբանությանը: Խնդիրն այն է, որ մեզ հուզող պատմական իրադարձությունը մինչեւ մեզ հուզել է ոչ որպես պատմություն, որ նրա իմաստը ուսումնասիրողների համար էլ վաղուց դուրս է եկել պատմությունից ու պատմականությունից, դարձել է գաղափարախոսություն ու աշխարհայացք, ավելին՝ քաղաքական դավանանք եւ գործում է այսօր էլ որպես քաղաքական դավանանք: Այստեղ է հարցի արդիականությունը, եւ այս է կրքեր շարժում, այս է պատճառը հեղինակի կրքոտության, որ կարող է չլինել գիտական շարադրանքում: Այդ կիրքը կա, բայց չի երեւում, թաքցված է նաեւ այն գիտական զննումներում, որոնց նպատակը Ավարայրի Մեծ նահատակի դասը պաշտպանելն է: Կարծում ենք, որ այստեղ դեր է ունեցել ոչ միայն եկեղեցին, որ սրբի լուսապսակ է դրել հազար ու երեսունվեց զոհերի ճակատին, այլեւ մեր նոր պատմության տրամաբանությունն ու ընթացքը՝ սկսած 19-րդ դարի 60-ական թվականներից, հետագա քաղաքական հանգամանքները, մեր երեկվա կախյալ պետականությունն իր ակամա պաշտոնական գաղափարախոսությամբ, այնուհետեւ՝ ճակատագրական պահերն անկախության նախադռանը եւ այլն: Ավարայրը դարձել է մեր պատմության ու քաղաքական գիտակցության առանցքը, եկեղեցին էլ՝ նրա գաղափարախոսն ու ջատագովը իր ավանդական դիրքով ու հիշողությամբ եւ ներկա փառավորյալ վիճակով: Եվ ինչ, «մահ իմացեալ...»:

Այս է խնդիրը, կասեր թագը կորցրած թագաժառանգը: Մենք նրա վիճակում ենք ավելի քան մեկ ու կես հազարամյակ եւ չենք կարող մեր հարցը ճիշտ ձեւակերպել, քանի դեռ չենք ազատվել մեր պատմության (նաեւ քաղաքականության) խնդիրները կրոնա-բարոյական հողի վրա քննելուց: Վարդանը հայրենասե՞ր, Վասակը դավաճա՞ն... Սա ոչ պատմագիտական մոտեցում է, ոչ էլ քաղաքական: Սա բարոյախոսություն է եւ հայրենասիրական զգացմունք, որին ոչ միայն դեմ չենք, այլեւ ինքներս կրողն ենք այդ, ինչպես բանաստեղծը կասեր, «ուղեղային մոլուցքի եւ սրտի հիվանդության»: Կրողն ենք ու սիրում ենք մեր առասպելներն ու սրբախոսությունները: Ուրեմն՝ սիրելով էլ քննենք մեր սրտի հիվանդությունը:

Քննենք երկրորդական մի պատճառ, որ ակնարկված է բանասիրական գրականության մեջ, բայց չի զբաղեցրել պատմաբաններին, նաեւ այս գրքի հեղինակին: Սա պատճառներից մեկն է 19-րդ դարակեսին ստեղծված առասպելի:

Այսպես, գրական ինչ ժանրի է պատկանում Վարդանանց պատերազմը վկայող առաջին աղբյուրը:

«Եղիշեի այս գործը վաղուց ի վեր սովորություն է եղել կոչել պատմություն,- գրում է Ստեփանոս Մալխասյանցը,- սակայն այս գրվածքը այժմյան հասկացողությամբ չէ կարելի կոչել պատմություն: Եղիշեի գիրքը մի հռետորական երկասիրություն է, ավելին ասենք, մի քերթված, բանաստեղծություն պատմական նյութի վրա»[3]: Գարագաշյանն այստեղ տեսնում է «պատմության վիպական ձեւ»[4], Աբեղյանը մի քանի բնութագրում է տալիս՝ «ամենից առաջ պատմություն», այնուհետեւ՝ «ճառագրություն», «ճարտասանական պատմություն», «քնարական վիպասանություն»[5]: Այս բոլոր գծերն էլ կան, բայց ո՞րն է միավորող շեշտը, ո՞րն է նպատակը: Դա նահատակության գաղափարն է: Եղիշեն իր շարադրանքն սկսում է որպես պատմություն եւ հանգում սրբախոսության: Իր բոլոր շեշտադրումներում նա սրբերի վարքերի ազդեցության տակ է, եւ նրա վիպասանության կենտրոնում վարքն է Մամիկոնյան Վարդանի: Այս լույսով են իմաստավորվում մյուս վկայաբանությունները՝ «տիկնանց փափկասունք» եւ «չարչարանաց սուրբ քահանայիցն»: Անկախ ժանրային տարբեր հատկանիշներից, Եղիշեի երկը սկզբունքորեն սրբախոսություն է, եւ այդտեղ է նրա ուժը, նրա ազդեցության գաղտնիքը հետագայում՝ 19-րդ դարի քաղաքական ռոմանտիկայի շրջանում եւ մեր պատմության ճակատագրական պահերին:

Փարպեցու երկը, ի տարբերություն Եղիշեի, պատմություն է, դարձյալ ջատագովական ոգով հորինված, բայց ոչ սրբախոսություն: Հերոսն այստեղ էլ սուրբ ու նահատակ է, բայց... այնքան էլ սուրբ չէ: Հավատուրացության հարկադրանքից նեղված ու սարսափած փախչում է, անցնում «ի կողմանս իշխանութեանն Յունաց»[6]: Եղիշեն այստեղ լուռ է: Վարդանի քայլը սրբին վայել չէ: Մալխասյանցն ուշադրություն է հրավիրում այս հանգամանքի վրա եւ անգամ դասալքություն է տեսնում Վարդանի արարքում[7]: Ըստ Փարպեցու, Վարդանի քայլը ճշմարիտ քրիստոնյայի քայլ է, քանզի Ավետարանն ասում է. «Յորժամ հալածեսցեն զձեզ ի քաղաքէս յայսմանէ՝ փախիջիք ի միւս»: Ասել է՝ հավատը վեր է եւ «վասն անուան Քրիստոսի՝ ընտրեմ գնալ յօտարութիւն»[8]: Տրամաբանությունը պարզ է: Բայց ահա Վասակ Սյունին թուղթ է ուղարկում Վարդանին, Ավետարանի հետ միասին եւ կոչ անում հետդարձի: Այս քայլի գնահատականը ոչ պատմիչն է տալիս, ոչ էլ Վարդանի դասը պաշտպանողները: Եղիշեի սրբախոսությունը կարծես խնդիր է դրել սովետահայ պատմաբանների առջեւ՝ ամեն գնով դավաճանի վիճակում պահել Վասակին: Մեզ մնում է սրբախոսությունը մտածողության եղանակ չդարձնել, հրաժարվել «հայրենասեր» եւ «դավաճան» հակադրությունից եւ այլ լեզու ընտրել՝ ասել ֆանատիկոս եւ դիվանագետ: Նիկողայոս Ադոնցը ճշտել է հարցադրումը հարյուր տարի առաջ, սկզբնաղբյուրները նույնն են, նոր վկայություններ չկան, եւ այնուամենայնիվ ժամանակն ստիպում է անդրադառնալ այս խնդրին: Խոսելու պահանջ չէր լինի, եթե Վարդանանց պատերազմը չվերածվեր ազգային գաղափարախոսության, արհեստականորեն չզուգահեռվեր Սարդարապատի ճակատամարտի հետ կամ Արցախի ազատագրման:

Ոչ մի ընդհանրություն այստեղ չկա: Նահատակության գաղափարախոսությամբ ոչ երկիր են պաշտպանում, ոչ էլ հող են ազատագրում: Պատմությունը պատմություն է, չենք դատում, սուրբը սուրբ է, քաղաքականությունը՝ քաղաքականություն: Հ. Դավթյանի գիրքը, որ շարունակությունն ու զարգացումն է Վարդանանց պատերազմի հանդեպ անցյալում մշակված քննական վերաբերմունքի, մեզ այս եզրակացությանն է բերում, անկախ իր վիճելի կողմերից:

Հեղինակի գլխավոր փաստարկը, որից ելնում են նրա եզրակացություններն ու վճիռները, Եղիշեի վկայությունն է Հազկերտի երկրորդ հրովարտակի մասին, որով հետ էր վերցվում քրիստոնեությունից հրաժարվելու պահանջը. «...հրամայէր անդէն համարձակութեամբ ըստ առաջին կարգին հաստատուն կալ յօրէնս քրիստոնէութեանն: ...Եւ իբրեւ զայս ամենայն արար եւ կարգեաց, յանդիման նոցա թողութեան հրովարտակս առնէր ընդ ամենայն երկիր իշխանութեան տէրութեան իւրոյ վասն քրիստոնէից»[9]: Սա Եղիշեն է ասում, Վարդանանց պատերազմի ջատագովն ու գաղափարախոսը եւ Վասակին ու նրա կուսակցությունը նզովողը: Փարպեցին այս մասին ակնարկում է անուղղակիորեն՝ Վասակի խոսքերով, որպես խաբեություն: Պատմաբանները որոշել են երկրորդին հավատալ, առաջինի մասին լռել: Ինչո՞ւ: Ինչո՞ւ ենք խուսափում քննական վերաբերմունքից: Վասակ Սյունին, որ ջանում էր կանխել պատերազմը, այս պատմության ամբողջ ընթացքում ներկայանում է որպես կատարյալ պետական այր, տիրելու ընդունակ, դիվանագետ: Ինչ որակում էլ նրան տան՝ «ուխտանենգ», «չարախորհուրդ», «ուրացող», «անօրեն», «նենգավոր» եւ այլն, նա մնում է ամենաողբերգական դեմքերից մեկը հայոց պատմության մեջ: Ծայրահեղ մերժողական վերաբերմունքը նրա հանդեպ լուրջ չի, ինչպես նաեւ վիճելի է հակառակ ծայրահեղությունը:

Այսպես. հեղինակն այն մտքին է, որ Վարդանանց պատերազմով կանխվել է բարձրացումը Սյունյաց տան՝ որպես թագավորական ազգային դինաստիայի: Ուշադրության արժանի եւ հատուկ տեսակետ է սա եւ իհարկե վիճելի: Վասակ Սյունին, մարզպանությունը թագավորություն դարձնելով (եթե...), վերականգնելու էր ազգային գահը... մի բան, որ չէր արել ոչ մեկն իրենից առաջ: Ո՞վ իմանա... Մենք սիրում ենք խոսել անցյալ կատարյալով եւ կեղծում պատմությունը օգնության աղերսներով: Մեր պատմության մեջ ազգայինը Վռամշապուհի կուսակցական քայլն էր եւ Մաշտոցի գործը, որի ավանդապահը եղավ եկեղեցին, որ գրավոր նյութ ավանդեց հաջորդ սերունդներին, եւ նրա սխրանքն էր, պարծանքը, այսօր փառավորվելու բուն իրավունքը: Ավարայր սարքեց՝ կոլեկտիվ նահատակություն, խեղդեց ազգային քաղաքական ուժը, պահպանեց իր հոգեւոր իշխանությունը, մեզ թողեց քարեր խաչազարդ եւ կտակեց մի մատենադարան:

Համաձայնելով այս գրքում զարգացվող հիմնական դրույթին՝ դժվարանում ենք ընդունել հեղինակի պաթոսը, որ նույնպես հակառակ է պատմական մոտեցման: Մեղադրական տոնը եկեղեցու հանդեպ արդարացված չէ: Եկեղեցին վաղ միջնադարում՝ քրիստոնեական ջատագովության ամենաբուռն շրջանում գործել է ըստ իր տրամաբանության, ոչ այնքան ընդդեմ աշխարհիկ իշխանության, այս դեպքում մարզպան Վասակի, որքան հանուն հավատի: Հոգեւոր եւ աշխարհիկ իշխանությունների հակասությունը եղել է 4-րդ դարում՝ Պապ Արշակունու օրոք եւ հասել Ներսեսի անեծքին: Բայց չմոռանանք 428 թիվը եւ Սահակ կաթողիկոսի դիրքը Վռամշապուհի անարժան որդու՝ Արտաշեսի հանդեպ: Սահակը նախատում էր նրան ներում եւ պաշտպանում դրսում՝ հանուն ոչ նրա անձի, այլ թագավորական գահի: Սա մեզ խրատ: Վարդանանց պատերազմում իրավիճակը տարբեր է, եւ դժվար է անվերապահորեն կանգնել եկեղեցու կողմը, բայց համարել նրա դիրքը ծրագրված պայքար աշխարհիկ իշխանության դեմ, նույնքան դժվար է: Դա վիճելի է ու սխալ է ինչպես պատմականորեն, այնպես էլ արդիականության տեսակետից:

Վարդանանց պատերազմը ոչ միայն սրբացված է, այլեւ առասպելացված է մեր ազգային գիտակցության մեջ այն աստիճան, որ չի համարվում պարտություն: Ասվում է հոգեւոր պատերազմ, բարոյական հաղթանակ եւ չի պատկերացվում ռազմական պարտությունը, ասենք

Տես էջ Բ

